

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑՈՒ ՄԻ ԱՆՏԻՊ ՄԻՐՈ ՏԱՂԸ\*

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ թղկուրանցիագիտություն, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի թիվ 979 ձեռագիր, անտիպ սիրո տաղ:

### Նախաբան

Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի թիվ 979 ձեռագրի 46բ–47բ թերթերում պահպանվել է իմե Հովհաննես թղկուրանցու անունով սիրային բովանդակությամբ մի անտիպ տաղ, որն անհայտ է եղել թղկուրանցիագիտությանը: Տաղի մասին չեն հիշատակել թղկուրանցու տաղերի բազմաթիվ հայտնի հրապարակողներ և տողերիս հեղինակը<sup>1</sup>:

Թեև թղկուրանցու տաղերի ու գանձերի գիտական ժողովածու կազմել են Ն. Ծովականը<sup>2</sup>, Էմ. Պիվազյանը<sup>3</sup> և Վ. Եղիազարյանը<sup>4</sup>, սակայն, ինչպես 1931 թ. Ա. Չոպանյանն է գրել, կարող ենք ասել, որ «Թղկուրանցու գործերուն ամբողջական հրատարակություն մը դեռ չունինք, եւ ասիկա պակաս մըն է, որ պետք է լրացուի»<sup>5</sup>:

Եվ ահա, երբ կրկին ձեռնարկել ենք թղկուրանցու տաղերի և գանձերի գիտական քննական բնագրերի նոր ժողովածուի տպագրության պատրաստման գործը, հայտնաբերեցինք ևս մեկ անտիպ մնացած, անգամ Բ. Կյուլեսերյանի ցանկում<sup>6</sup> չհիշատակված տաղ՝ խորագրված «Տաղ սիրոյ»:

Անտիպ այս տաղի մասին միակ տեղեկությունը հանդիպում ենք Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի հայերեն ձեռագրերի ցուցակում<sup>7</sup>:

### Անտիպ տաղի բնագրի պատրաստում և մեկնաբանում

Մեր խնդրանքով տաղի ձեռագրի էլեկտրոնային լուսապատճենը սիրով մեզ է ուղարկել Վիեննայի Մխիթարյան միաբանության արքայապետ Պողոս

\* Ներկայացվել է 05. I. 2022 թ., գրախոսվել է 12. I. 2022 թ., ընդունվել է տպագրության 02. V. 2022 թ.:

<sup>1</sup> Թղկուրանցի. 2004:

<sup>2</sup> Թղկուրանցի. 1958:

<sup>3</sup> Թղկուրանցի. 1960:


<sup>4</sup> Եղիազարյան. 1997, նաև՝ Թղկուրանցի. 2004, 184:

<sup>5</sup> Չոպանյան. 1931, թիւ 5–6, 2:

<sup>6</sup> Տե՛ս Կիւլէսէրեան. 1939:

<sup>7</sup> Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա. 1963, հ. Բ, 566:

Գոճանյանը, ինչի համար խորին շնորհակալություն ենք հայտնում:



Հիշյալ ձեռագրից հայտնի միակ օրինակի հիման վրա էլ կազմել ենք անտիպ տաղի բնագիրը:

## ՏԱՂ ՍԻՐՈՅ

Հոգի՛ր՝ զալըմ, նազլո՛ւ քեաֆիր, սեւ աչե՛ր,  
է՞ր չես ի գար, օրիկ մի՛ գիս հարցաներ.  
Շատ եմ քաշեր տերտ ու պէլատ քեզ համար,  
Եկո՛ւ, ծով ծով աչե՛ր, գիս մի՛ լացըներ:

- 5 Գիշեր ցորեկ քունս է հատեր աչերուս,  
Հայ անօրէն, ականջ արա՛ քո գերուս,  
Հէքիմ՝ կ'ասեն, դեղի՛ կ'մ'արա խօցերուս,  
Եկո՛ւ, ծով ծով աչե՛ր, գիս մի՛ լացըներ:

- Գիշեր ցորեկ քոյ տերտն արեր գիս ֆէրման,  
10 Հայ անօրէն, գէմ որ քար չեմ դիմանար,  
Խեղճ եմ եղեր սիրուտ, լալով շուրջ կու գամ,  
Եկո՛ւ, ծով ծով աչե՛ր, գիս մի՛ լացըներ:

- Գիշեր ցորեկ ի քո տերտէն հաւաչեմ,  
Կ'ուզեմ զանուկ յայտնի ասեմ, կ'ամաչեմ,  
15 Սիրտըս դադար չի տար, գաղտուկ կու կանչեմ,  
Եկո՛ւ, ծով ծով աչե՛ր, գիս մի՛ լացըներ:

- Կու սիրեմ, կու սիրեմ, իմ սէրըն դու ես,  
Թէ՛ դու գիս չես սիրեր, Աստըծէ՛ գտնես,  
Կ'երթամ մէկ մ'ալ սիրեմ, հեզվէ, թէ՛ դու ես,  
20 Եկո՛ւ, ծով ծով աչե՛ր, գիս մի՛ լացըներ:

Խեւ Յովանէս, ըզքեզ խելօք կու կարծես,  
Բարին թողեր, կամաւ չարիք կու գործես,  
ԶԱստուած թողիր, զանգէտ բաներ կ'աղաչես,  
Ահեղ դատաստանին օրն ո՛չ կու յիշես:

Այս գողտրիկ սիրո տաղը դիմումնային խոսքով ուղղված է «զալըմ»–անխիղճ հոգի ունեցող, «քեաֆիր»–անողոք «նազլու»–նազանի սեւաչյա գեղեցկուհուն, որ գոնե մի օր չի գալիս ու գտնում իրեն, ինչի համար սիրահար բանաստեղծը շատ «տէրտ»–դարդ-ցավ և «պէլատ»–փորձանք է կրել: Ահա թե ինչու «Եկո՛ւ, ծով ծով աչե՛ր, գիս մի՛ լացըներ» կրկնակ տողով փորձում է սփոփել իր տանջալի սպասումն ու սիրո վիշտը:

Սակայն գիշեր-ցորեկ սպասման կարոտից աչքերին քուն չի գալիս այլևս, ուստի սիրահար բանաստեղծը դիմում է «անօրէն» գեղեցկուհուն, որ ականջ անի իր «գերուս»–ն, ապա հորդորում որպես «հէքիմ» մի դեղ անել իր «խօցեր»–ին՝ կրկին կրկնակ տողով ականալելով սիրուհու այցը, որպեսզի սիրահարը դադարի լալուց:

Գիշեր ու ցերեկ սիրո դարդն իր համար «Ֆէրման»—հրաման դարձրած «անօրէն»-ին գանգատովում է, թե ինքը քար չէ, որ դիմանա սիրո կարոտին, ուստի կրկին դիմում է կրկնակ տողին՝ որպէս սպասման հույս:

Յերեկը գիշեր ու գիշերը ցերեկ դարձրած սիրահարը հառաչում է սիրո դարդից, ուզում է «յայտնի»—բացահայտ ասել սիրուհու անունը, սակայն ամաչում է բարձրաձայնել:

Կ'ուզեմ գանունդ յայտնի ասեմ, կ'ամաչեմ,  
Սիրտըս դադար չի տար, գաղտուկ կու կանչեմ:

Ուստի անդադար գաղտնի, մտքում անունը տալով—«գաղտուկ կու կանչեմ»՝ դիմում է սիրուհուն՝ կրկին ապավինելով կրկնակ տողի խոսքի գորութեանը:

Խոսքի ուժի հավատալիքի արտահայտութիւն է նաև «Կու սիրեմ, կու սիրեմ, իմ սէրըն դու ես, / Թէ դու զիս չես սիրեր, Աստըծէ գտնես» անեծքախառն սիրո խոստովանութիւնը: Իսկ եթե սիրելի գեղեցկուհին չգա վայելելու իր սերը, ապա՝

Կ'երթամ մէկ մ'ալ սիրեմ, հեզվէ, թէ դու ես ...

Այն է՝ սիրահար բանաստեղծը սպառնում է գնալ և սիրել մեկ ուրիշի, ինչի բանաստեղծական ուշ արձագանքը չարենցյան տողերն են.

Երթամ — ուրիշ գողալների գիրկը դնեմ գլուխս տաք՝  
Քո էդ անուշ, ալիք տեսքով հարբած ըլիմ մինչև էգուց<sup>8</sup>:

Սիրուց խեցած բանաստեղծը թեև գեղեցկուհուց նեղսրտած գնում է մեկ ուրիշի սիրելու, սակայն իր պարտականութիւնը համարում է մտովի նրան կրկին սիրելը, ուստի կրկնակ տողով նորովի ապավինում է սիրուհու դարձին, որ ցամաքեն սիրո կարոտից լացող իր աչքերը:

Իսկ վերջում սիրուց ու կարոտից տոչորվող խեղ բանաստեղծը դիմում է ինքն իրեն՝ «Խեղ Յովանէս, գրեզ խելոք կու կարծես», քանի որ ինքը թողել է աստվածային բարիքը՝ «կամաւ չարիք» գործելով, Աստծուն թողնելով, աղաչում է «գանգէտ բաներ»՝ մոռանալով «Ահեղ դատաստանի» օրը:

Թշկուրանցու սիրո տաղերին հատուկ կրոնաբույր վերջաբանով բանաստեղծը փորձում է մեղմել սիրելու իր մեղքը՝ որպէս երկվութեամբ ապրող միջնադարյան հավատացյալ, որը, սակայն, հաջորդ սիրային տաղն արարելիս նորովի տրվելու է սիրո վայելքի ու գեղեցկութեան անդիմադրելի թովջութեանը:

Եզրակացութիւն

Վիեննայի Միխիթարյան միաբանութեան մատենադարանի թիվ 979 ձեռագրում պահպանված «Հոգի՛ դալըմ, նազլի՛ւ ...» սկսվածքով սիրո տաղը

<sup>8</sup> Չ ա ր ե ն ց. 1986, 212:

Հովհաննես Թլկուրանցու ստեղծագործությունն է ոչ միայն իսկ Հովհաննեսի անվան Հիշատակմամբ, այլև քանի որ այն իր բանաստեղծական ոգով հարազատ է Թլկուրանցիական պոեզիային, ինչպես նաև տաղերգուի սիրերգությունը հատուկ կրոնաբույր վերջաբաններին: Առաջին անգամ հրապարակվող այս ստեղծագործությունը իսկ Հովհաննես Թլկուրանցու գրչին պատկանող նորահայտ սիրային տաղ է:

Վանո Եղիազարյան – բ. գ. դ., պրոֆ.: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և միջնադարյան գրականություն, բնագրագիտություն՝ գրաբար բնագրերի փոխադրությամբ, բանագիտություն, արդի հայ գրականություն և գրական քննադատություն: Հեղինակ է 23 գրքի և 100-ից ավելի հոդվածի: vano.exiazaryan@mail.ru

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Եղիազարյան Վ. 1997, Երկու անտիպ տաղ Հովհաննես Թլկուրանցուց. – «Էջմիածին», թիվ Ա, էջ 84–89:

Եղիշե Չարենց. 1986, Երկեր, հ. 1, Երևան, «Սովետական գրող» հրատ., 440 էջ:

Թլկուրանցի Հ. 2004, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ՝ Վ. Եղիազարյանի, Վանաձոր, «Վանատուր» տպարան, 184 էջ:

Կիլիսեյեան Բ. 1939, Պատմության կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս, տպ. Դպրանոյ կաթ. Կիլիկիոյ, 1446 էջ:

Յովհ. Թլկուրանցի. 1958, Տաղագիրք, աշխատասիրությամբ՝ Ն. Ծովակյանի, Երուսաղեմ, 110 էջ:

Յովհ. Թլկուրանցի. 1960, Տաղեր, աշխատասիրությամբ՝ Էմ. Պիվազյանի, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 298 էջ:

Չոպանեան Ա. 1931, Յոհաննես Թլկուրանցի. – «Անահիտ» (Փարիզ), թիվ 5–6, էջ 2:

Տուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա. 1963, հ. Բ, կազմեց Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1154 էջ:

#### ОДНА НЕОПУБЛИКОВАННАЯ ПЕСНЯ ЛЮБВИ ОТ ОВАНЕСА ТЛКУРАНЦИ

ВАНО ЕГИАЗАРЯН

#### Резюме

*Ключевые слова:* тлкуранциоведение, рукопись Матенадарана Конгрегации мхитаристов в Вене за номером 979, неопубликованная песня любви.

Песня любви с началом «Оги залм, назлу...», сохранившаяся в Матенадаране Конгрегации мхитаристов в Вене, в рукописи за номером 979, принадлежит Ованесу Тлкуранци не только по свидетельству Хева Ова-

неса, но и по своему поэтическому духу, близкому поэзии тлкурийцев, и по религиозно-возвышенным концовкам. Публикуемое впервые произведение Хева Ованеса Тлкуранци до сих пор рукописно и может считаться нововывявленной песней любви.

*Вано Егиазарян – д. филол. н., проф. Научные интересы: древнеармянская и средневековая армянская литература, текстология – с изложением древнеармянских (на грабаре) оригиналов, фольклористика, современная армянская литература и литературная критика. Автор 23 книг и более 100 статей. vano.exiazaryan@mail.ru*

## AN UNPUBLISHED LOVE SONG BY HOVHANNES TLKURANTSI

VANO YEGHIAZARYAN

### Summary

*Key words: tlkurantsiology, No 979 manuscript in the Matenadaran of the Vienna Mechitarist Congregation, an unpublished love song.*

The love song with the beginning of “Hogi zalm nazlu...”, preserved in the No 979 manuscript of the Matenadaran of the Vienna Mechitarist Congregation, belongs to Hovhannes Tlkurantsi, not only by the mentioning of Khev Hovhannes, but also for its poetic spirit close to Tlkurantsi’s poesy and for the religious exalted epilogues. Khev Hovhannes Tlkurantsi’s creation, to be published for the first time, is still in the form of a manuscript and may be considered a newly discovered love song.

*Vano Yeghiazaryan – Doctor of Sciences in Philology, Professor. Scientific interests: Ancient and Medieval Armenian literature, textology-originality with transfer of Old Armenian (Grabar) texts, folkloristics, Modern Armenian literature and literary criticism. Author of 23 books and over 100 articles. vano.exiazaryan@mail.ru*